

<<2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ>> ՄՐՑՈՒՅԹԻ 9-ԲԴ ՄՐՑԱՇԱՐԻ IV ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. Եթե կազմակերպությունն աշխատակցին օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ է ծանուցում տվյալ աշխատողի աշխատանքից ազատման մասին, ապա տվյալ պարագայում կիրառված տույժի մասով որքա՞ն է պահվում եկամտային հարկ:

ա) 23 տոկոս (սանդղակ 150 հոդվածով նախատեսված).

բ) 0 տոկոս.

գ) 10 տոկոս:

2. Արդյոք ֆիզիկական անձը կարո՞ւ է հանդիսանալ ԱԱՀ հաշվարկող և վճարող:

ա) այո.

բ) ոչ:

3. Միջնորդ հանդիսացող իրավաբանական անձը, եթե հանդիսանում է կոմիսիոներ, կոմիտենտին վճարվող գումարների մասով, հանդիսանու՞մ է հարկային գործակալ, թե՞ ոչ:

ա) այո.

բ) ոչ:

4. Ընթացիկ ակտիվները սահմանվում են որպես ակտիվներ, որոնք՝

ա) պահվում են հիմնականում առևտրային նպատակներով կամ կարճաժամկետ տևողությամբ, և ակնկալվում է իրացնել (մարել) հաշվեկշռի ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում.

բ) ակնկալվում է իրացնել (մարել), կամ պահվում են վաճառքի կամ սպառման համար կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում.

գ) միաժամանակ բավարարում են ա՛ և՛ բ՝ կետերում նշված պայմաններին.

դ) բավարարում են ա՛ կամ բ՝ կետերում նշված պայմաններից մեկնումեկին:

5. Իրացման գուտ արժեքը որոշելիս նշված ծախսումներից որո՞նք են հանվում սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գնից

ա) վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները

բ) վարչական վերադիր ծախսումները

գ) պաշարների համալրման ծախսումները

զ) ա՛ և՛ գ՝ կետերում նշվածները:

6. Արտադրական կազմակերպությունում նշվածներից որը չի համարվում ֆինանսական գործունեություն՝

ա) կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխումը.

բ) կազմակերպության կողմից բաժնետոմսերի տեղաբաշխումը.

գ) այլ կազմակերպությանը փոխառության տրամադրումը.

դ) բաժնետոմսերի հետգնումը:

7. Ապրանքային վարկի ստացումը դիտվում է որպես^ա

ա) գործառնական գործունեության արդյունքում առաջացող դրամական միջոցների հոսքեր.
բ) գործառնական գործունեության արդյունքում առաջացող դրամական միջոցների հոսքեր եթե ստացված ակտիվները օգտագործվելու են գործառնական նպատակներով.

գ) ներդրումային գործունեության արդյունքում առաջացող դրամական միջոցների հոսքեր, եթե ստացվել են երկարաժամկետ ակտիվներ, հակառակ դեպքում^ա որպես գործառնական գործունեությունից առաջացող.

դ) նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

8. Վաճառված ոչ նյութական ակտիվի գծով կուտակված արժեզրկման դուրսգրման արտացոլում`

ա) Դեբետ 721 .

Կրեդիտ 131.

բ) Դեբետ 136

Կրեդիտ 131.

գ). Դեբետ 714

Կրեդիտ 136:

9. Ներդրումային գույքի իրական արժեքով վերաչափումից արժեքի աճի արտացոլում`

ա) Դեբետ 122

Կրեդիտ 321.

բ) Դեբետ 122

Կրեդիտ 624.

գ) Դեբետ 122

Կրեդիտ 627:

10. Արտարժույթով արտահայտված դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերության արտացոլում (արտարժույթի փոխարժեքը դրամի նկատմամբ աճել է)^ա

ա) Դեբետ 253

Կրեդիտ 625.

բ) Դեբետ 725

Կրեդիտ 253.

գ) Դեբետ 253

Կրեդիտ 321:

**՝2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ՝ ՄՐՑՈՒՅԹԻ 9-ԴԴ ՄՐՑԱՇԱՐԻ
IV ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Ա՛ կազմակերպությունը հանդիսանում է ԱԱՀ վճարող և զբաղվում է հրուշակեղենի մանրամեծածախ առևտրով: Հաշվետու ժամանակահատված է համարվում հուլիս ամիսը:

1. Ա՛ կազմակերպությունը 29 հունիսի 2018թ.-ին ՀՀ տարածք է ներմուծել հոսքագիծ, Չինաստանից, որի մաքսային արժեքը կազմել է 56 000 հազ. ՀՀ դրամ, որի մասով ԱԱՀ-ն

վճարել է 10.07.2018թ.-ին: Տվյալ հոսքագծի գործարկման նպատակով ռուսական կազմակերպությունից մասնագետներ են հրավիրվել, որոնք կատարել են տեղակայման և գործարկման աշխատանքներ 100 հազ. ռուբլի արժեքով, որի մասով ՀՀ կազմակերպությունը 12 հուլիսի 2018թ.-ին գրել է մատակարարի անունից հաշիվ, իսկ Ռուսական կողմը տվել է հաշիվ ապրանքագիր 11 հուլիսի 2018թ.-ի ամսաթվով: 23 հուլիսի 2018թ.-ին կազմակերպությունը Բելոռուսից ներմուծում է ապրանքներ 850 հազ. ռուբլի արժեքով, որի մասով ներմուծման հայտարարագիր է ներկայացել 10 օգոստոսի 2018թ.-ին և նույն օրը վճարում ամբողջ առաջացած ԱԱՀ-ն, սակայն 15 օգոստոսին պարզում է, որ 250 հազ դրամի չափով քիչ էր հայտարարագրել և ուղղում է ինքնուրույնաբար և առաջացած տարբերությունը ևս վճարում:

2. Նույն հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ապրանքների մատակարարման կոմիսիա, 10 տոկոս միջնորդավճարով, իրացման արժեքը կազմել է 1 200 հազ. դրամ, որի մասով իրացումը կատարվել է մանրածախ վաճառքի եղանակով:

3. Կատարել է նաև մանրածախ վաճառք 560 հազ. դրամի:

4. Մեծածախ եղանակով կատարվել է նաև ապրանքների իրացում 8 600 հազ. դրամի, սակայն նույն ժամանակահատվածում իրացել է 500 հազ դրամի ապրանքներ անհատույց եղանակով:

Պահանջվում է որոշել վճարման/հաշվանցման ենթակա ԱԱՀ-ն և լրացնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը:

Պահանջվում է որոշել վճարման/հաշվանցման ենթակա ԱԱՀ-ն և լրացնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը:

ՊԱՏԱՄԽԱՆ

Ձև

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ							1. Փաստաթղթի հերթական համարը <small>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</small>								
2. Հարկ վճարողի հաշվառման համարը							3. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը								
4. Հարկ վճարողը															
5. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)															
6. Հաշվետու ժամանակաշրջանը							Տարի	2	0	1	8	Ամիս	0	7	

(դրամ)

ԲԱԺԻՆ 1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ		
ԱԱՀ-ի կրեդիտ	[Ա]. Հարկման բազա	[Բ]. ԱԱՀ կրեդիտ
7. ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների	9,600,000	1,920,000
8. Ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների	X	X

1) նվազեցում				
2) ավելացում				
9. ԱԱՀ-ի 16.67% հաշվարկային դրույքաչափով հաշվարկվող			560,000	93,352
10. ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորություն			X	235,000
11. Մատակարարի անունից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների			X	X
1) նվազեցում			X	
2) ավելացում			X	
12. ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքների, այդ թվում՝				X
1) Հարկային օրենսգրքի հոդված	2) մաս	3) կետ	X	X
				X
				X
13. ԱԱՀ-ից ազատված գործարքների, այդ թվում՝				X
1) Հարկային օրենսգրքի հոդված	2) մաս	3) կետ	X	X
64				X
				X
14. Արտոնագրային հարկով հարկվող գործունեությունից, այդ թվում՝				X
				X
				X
15. Հաշվարկված ԱԱՀ-ի հարկային պարտավորությունների (ԱԱՀ-ի կրեդիտի) ճշգրտում			[Ա]. Ավելացում	[Բ]. Պակասեցում
16. Ընդամենը ԱԱՀ-ի կրեդիտ [Ա]=[7.Ա]-[8.1Ա]+[8.2Ա]+([9.Ա]-[9.Բ])+[12.Ա]+[13.Ա]+[14.Ա] [Բ]=[7.Բ]-[8.1Բ]+[8.2Բ]+[9.Բ]+[10.Բ]-[11.1Բ]+[11.2Բ]+[15.Ա]-[15.Բ]			[Ա]. Հարկման բազա	[Բ]. ԱԱՀ կրեդիտ
			11,241,648	2,248,352
ԱԱՀ-ի դեբետ			[Ա]. Արժեք	[Բ]. ԱԱՀ դեբետ
17. ՀՀ տարածք ներմուծված ապրանքների			6,128,500	1,225,700
18. ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների			775,000	155,000
19. Ձեռքբերումներին վերաբերող ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների			X	X
1) նվազեցում				

2) ավելացում				
20. Հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ ըստ ճշգրտման հիմքերի.			[Ա]. Ավելացում	[Բ]. Պակասեցում
1) Հարկային օրենսգրքի հոդված	2) մաս	3) կետ	X	X
21. Ընդամենը ԱԱՀ-ի դեբետ ([17.Բ]+[18.Բ]-[19.1Բ]+[19.2Բ]+[20.Ա]-[20.Բ]) Եթե գործողության արդյունքը՝ - հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0» - դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, - բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը			[Ա]. դրական 1,380,700	[Բ]. բացասական
22. Ներմուծված այն ապրանքների, որոնց մասով հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն առաջանում է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար			[Ա]. Հարկման բազա	[Բ]. Հաշվարկված ԱԱՀ գումար
23. Հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ԱԱՀ - եթե լրացված է [21.Ա] վանդակը՝ ապա ([16.Բ] - [21.Ա]), - եթե լրացված է [21.Բ] վանդակը՝ ապա ([16. Բ] + [21.Բ]): Եթե նշված գործողության արդյունքը դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, եթե բացասական՝ լրացվում է [Բ] վանդակը, եթե հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»:			[Ա]. Պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար 867,652	[Բ]. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումար